ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/42» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 28-ը հունիսի 2019թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան (ԳԱՊ),
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ. Ուատյան,
ՀՀ ՋՈՒ ԹՎ իրային ծառայության իրային գույքի պլանավորման և ապահովման բաժնի ավագ սպա, կապիտան Վ. Բարսեղյան:

Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ Ա. Գրիգորյան:
Բացակայում էր՝ ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչության իրային ծառայության պետ, գնդապետ Վ. Պապյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/42» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ գնանշման ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/42» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին <Սոֆթ Թրեյդ> ՍՊԸ -ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ <Սոֆթ Թրեյդ> ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել Հավելված N 6-ը և Հավելված N 6.1-ը:

Պայմանագրի և հարկային հաշիվների միջև առկա են տարբերություններ: Մասնավորապես, պայմանագրով նախատեսված է մատակարարել միայն զուգարանի թուղթ և տնտեսական օճառ, այնինչ հարկային հաշիվներով մատակարարվել են նաև այլ ապրանքներ:

Պայմանագրով զուգարանի թղթի մեկ միավորի գինը, ներառյալ ԱԱՀ-ն կազմում է 72 ՀՀ դրամ, իսկ հարկային հաշիվներում մեկ միավորի գինը նշված է 73 ՀՀ դրամ:

Պայմանագրով նախատեսված է մատակարարել 25 260 հատ տնտեսական օճառ, սակայն հարկային հաշիվներով պակաս է մատակարարվել 14 110 հատ տնտեսական օճառ:

Հանձնաժողովը կասեցրել է նիստը և <Սոֆթ Թրեյդ> ՍՊԸ -ին ծանուցել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է շտկված անհամապատասխանությունները: 03.07.2019թ. նիստը շարունակվել է և գնահատող հանձնաժողովը ներկայացված շտկված անհամապատասխանությունները գնահատել է հրավերի պահանջներին համապատասխանող:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան

եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չունի:

1.2 Որակավորման փաստաթղթերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 03.07.2019թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց <Սոֆթ Թրեյդ> ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/42» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/42» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Գրիգորյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/42» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող Հ. Մելիքյան

Գնահատող Գ. Ուխտյան

Գնահատող Վ. Բարսեղյան

Գնումները համակարգող՝ Ա. Գրիգորյան